ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Լիլիա Շուշանյանի գործուղման արդյունքների մասին

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Լիլիա Շուշանյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Նորվեգիայի Թագավորություն, 2020թ. փետրվարի 10-ից 12-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության խորհուրդ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությունը, որին Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է 2017թ., հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկությանը և հաշվետվողականությանը նպաստող միջազգային ստանդարտ է, որի բարձրագույն կառավարման մարմինը ԱՃԹՆ Խորհուրդն է: Այն իր որոշումներն ընդունում է տարեկան առնվազն երկու անգամ անցկացվող Խորհրդի նիստերի միջոցով: Որոշումները վերաբերում են ինչպես ողջ նախաձեռնության կանոններին և ստանդարտի բարեփոխումներին, այնպես էլ անդամ պետությունների կարգավիճակին առնչվող հարցերին՝ անդամակցություն, վալիդացիայի անցկացում և գնահատում, կարգավիճակ: Միջազգային քարտուղարության կողմից Խորհրդի նիստերից առաջ քննարկման ենթակա թեմաների շուրջ իրականացվում են ուսումնասիրություններ, որոնց շրջանակներում անհրաժեշտություն է առաջացել Խորհրդի նիստին նախորդող անդամ պետությունների ազգային կոորդինատների քննարկումներն առավել ինստիտուցիոնալացված դարձնել: Միջազգային քարտուղարության հրավերով ազգային կոորդինատորների հանդիպմանը մասնակցելը նպատակ ուներ ներկայացնելու նաև Հայաստանի արդեն իսկ հարուստ փորձը ստանդարտի կիրարկմանն առնչվող հարցերի շուրջ, ինչպես նաև մեր երկրի

դիտարկումները և մոտեցումը նախաձեռնության զարգացման հնարավոր ուղղությունների և առկա մարտահրավերների վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

Աշխատաժողովի ընթացքում օրակարգում տեղ գտած հարցերից էր այն, թե որքանով են ԱՃԹՆ-ի ազգային նպատակները համահունչ ընդհանուր ազգային բարեփոխումների հետ: Հայաստանի կողմից հատկապես կարևորվեց, որ ԱՃԹՆ-ի շրջանակներում ձևավորված և ինստիտուցիոնալացված գաղափարները, ինչպիսիք են իրական սեփականատերերի հրապարակայնությունը կամ պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճը, իրենց արտացոլումը գտնեն նաև ազգային այլ գործընթացների շրջանակներում: Անդրադարձ կատարվեց նաև քաղաքական ուժերի փոփոխության դեպքում սահմանված նպատակների շարունակական իրականացման ապահովման անհրաժեշտությանը:

Քննարկումների ընթացքում էական տեղ էր հատկացված միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից աջակցության անհրաժեշտության, ոլորտային հարցերի շուրջ ուղեցույցների մշակման, ինչպես նաև ազգային Բազմաշահառու խմբերի և պետական կառույցների ներկայացուցիչների կարողությունների զարգացման անհրաժեշտության խնդիրներին:

Ներկայացվեց նաև ԱՃԹՆ վալիդացիայի գործընթացին վերաբերող հարցաշարին անդամ պետություններից հավաքագրված պատասխանների ամփոփ նկարագիրը՝ կապված այն հարցադրումների հետ, թե ինչ ժամկետներում կամ ինչ թեմաների համախմբի պետք է վալիդացիայի ժամանակ անդրադարձ կատարվի և թե ինչպես կարելի է ռեսուրսներն ավելի արդյունավետ օգտագործել:

Խորհրդի քննարկմանը ներկայացնելուց առաջ անդամ պետությունները քննարկեցին նաև ԱՃԹՆ-ի միջոցով էներգետիկ փոխակերպման կամ կոռուպցիայի հարցերին ուղղակի անդրադարձ կատարելու նպատակահարմարությանը: Հայաստանի կողմից ներկայացվեց այն մոտեցումը, որ չնայած չի վիճարկվում գաղափարների սխալ կամ ճիշտ լինելը, սակայն պետք է զգուշավորություն ցուցաբերել, որպեսզի ստանդարտում նորանոր դրույթների ավելացումը նախաձեռնությունից չվանի այն երկրներին, որոնք դեռևս փորձում են իրականացնել արդեն սահմանված պահանջները: Միաժամանակ, նշվեց, որ ԱՃԹՆ-ի գործունեության արդյունավետությունը հիմնված է վերջինիս հստակ նպատակների և մեխանիզմների վրա, իսկ նոր, բայց ընդհանրական դրույթները կթուլացնեն նախաձեռնության դիրքերը: Առանձնացվեց, որ տվյալ թեմաներով արդեն իսկ գործում են այլ նախաձեռնություններ, ուստի առավել ռացիոնալ կլիներ գտնել տվյալ նախաձեռնությունների միջև հատվող կետերը և, համախմբելով ռեսուրսները, ծառայեցնել

դրանք ընդհանուր նպատակների իրականացմանը պրակտիկ դաշտում: Նախաձեռնության ստանդարտում դրույթներ արծարծելիս արդյունավետ կիրառման համար էական կլինի ապահովել դրանց հստակ և չափելի լինելու հանգամանքը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ, ԵԼՈՒՅԹՆԵՐ, ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ և ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Աշխատաժողովից բացի Խորհրդի նիստի շաբաթվա ընթացքում կազմակերպվել էր <<ԱՃԹՆ առաջնորդների սեմինար>> առաջավոր փորձի փոխանակման նպատակով: Որպես Հայաստանի ներկայացուցիչ, հրավիրված էի ելույթ ունենալու երկու թեմայով՝ իրական սեփականատերերի ինստիտուտի ներդրում. տեխնիկական խնդիրները և դրանք հաղթահարելու ուղիները, ինչպես նաև ԱՃԹՆ ազդեցությունը անդամ երկրներում: Ներկայացրել եմ մեր երկրում իրավական ակկտերի մշակման ընթացքում վերհանված այն բացերը, որոնք արդեն պատրաստվում ենք լրամշակել, որպեսզի մյուս երկրներն ի սկզբանե ուշադրություն դարձնեն այդ հանգամանքներին: Միջազգային քարտուղարությանն ուղղված առաջարկ է հնչել համագործակցություն հաստատելու նաև Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության հետ՝ թափանցիկության առավել խիստ պահանջներ սահմանող կարգավորվող շուկաների վերհանման և միայն վերջիններում ցուցակված լինելու դեպքում հայտարարագիր չներկայացնելու բացառության կիրառման նպատակով: Առաջարկվել է նաև 2020թ. ընթացքում միջազգային քարտուղարության կողմից իրականացնել բոլոր երկրներում ներդրված համակարգերի ուսումնասիրություն և լավագույն փորձի օրինակներն ամփոփ տեսքով ներկայացնել անդամ պետություններին՝ հնարավորություն ընձեռելով կիրառելու առավել հաջող լուծումները, ինչը ողջունվեց էր միջազգային քարտուղարության կողմից:

Առանձնազրույց է կազմակերպվել նաև Հայաստանի առաջին վալիդացիայի թեմայով, որի շրջանակներում տրվել են հստակ պատասխաններ քարտուղարության կողմից բարձրացված հարցերին: Ընդհանուր առմամբ, միջազգային քարտուղարությունը բարձր է գնահատել վերջին երեք տարվա ընթացքում ոլորտում թափանցիկության մակարդակի բարձրացմանն ուղղված Հայաստանի կատարած բարեփոխումները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի առաջին վալիդացիայի հաշվետվության նախագիծը առաջիկա ամսվա ընթացքում տրամադրելու Հայաստանին՝ մեկնաբանություններ ներկայացնելու համար, որից հետո այն կտրամադրվի ԱՃԹՆ Խորհրդին քննարկման և որոշման կայացման համար:

Գերմանիայի ԱՃԹՆ քարտուղարության նախաձեռնությամբ հանդիպում է տեղի ունեցել նաև Գերմանիայում Թրանսփարենսի Ինթրնեյշնլ կազմակերպության

ներկայացուցիչ Էդդա Մյուլլերի հետ: Վերջինիս հետ քննարկվել են կայուն զարգացման ուղղվածության մի շարք հարցեր, որոնք առաջնային հետաքրքրություն են ներկայացնում մեր երկրի համար: Առաջարկվել և խրախուսվել է համագործակցություն հաստատել Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ տվյալ ուղղություններով աշխատանքներ տանելու նպատակով:

Աշխատաժողովի ընթացքում առանձնազրույց է տեղի ունեցել նաև Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Քրիսթըֆր Շելդոմի հետ, որի ընթացքում քննարկվել են 2019 թվականի տարեվերջին մեկնարկած EGPS 2 դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Հայաստանին աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները: Պայմանավորվածություն է ձեռք բերվել վերջինիս կողմից գարնանը Հայաստան այցելելու, իսկ մինչ այդ նաև աջակցության վերաբերյալ պաշտոնական պատասխան տրամադրելու վերաբերյալ:

Լիլիա Շուշանյան

14.02.2020թ.